ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՕՖԵՐՏԱ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հանդիսանում է «Դոպինգ Սփեյս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Վաճառող) կողմից արված հրապարակային օֆերտա:

1.2. Պայմանագրի տեքստը մշտապես տեղադրված է Վաճառողի https://dopingspace.com/ կայքէջում (այսուհետ՝ Կայք) հետևյալ հղմամբ https://dopingspace.com/public-offer-arm.pdf, և պարունակում է Պայմանագրի բոլոր էական պայմանները:

1.3. Կայքում տեղադրված են միջոցառումների վերաբերյալ տեղեկություններ, մասնավորապես՝ միջոցառման (կատարողի) անվանումը, նկարագրությունը, ամսաթիվը, ժամը և վայրը (այսուհետ՝ «Միջոցառում»):

1.4. Պայմանագրի տեքստը հանդիսանում է հրապարակային օֆերտա (այսուհետ՝ Օֆերտա)՝ Կայքի համապատասխան էջում նշված Միջոցառումների կազմակերպիչ հանդիսացող Վաճառողի կողմից Պայմանագիր կնքելու վերաբերյալ արված առաջարկ՝ հասցեագրված ցանկացած Գնորդի (այսուհետ նաև՝ Օգտատեր), ով Կայքի համապատասխան բաժնում լրացրել է բոլոր պարտադիր դաշտերը և ցանկանում է գնել որևէ Միջոցառման տոմս:

1.5. Օֆերտան համարվում է ակցեպտավորված, եթե Գնորդը կատարում է հետևյալ հաջորդական գործողությունները.

- ընտրում է Միջոցառումը (կատարողին) և սեղմում է ԳՆԵԼ ՏՈՄՍ կոճակը՝ անցում կատարելով պատվերի ձևավորման և ձևակերպման պատուհան,
- ընտրում է Միջոցառման օրը,
- բացված պատուհանում ընտրում է դահլիճում նստատեղերը, նշում դրանք և սեղմում ՀԱՍՏԱՏԵՔ ՏՈՄՍԵՐԸ կոճակը,
- բացված դաշտում լրացնում է պահանջվող տեղեկությունները՝ անուն, ազգանուն, էլեկտրոնային հասցե և հեռախոսահամար,
- ապա սեղմում է ԱՆՑՆԵԼ ՎՃԱՐՄԱՆ կոճակը,
- ԱՆՑՆԵԼ ՎՃԱՐՄԱՆ կոճակը սեղմելուց հետո համակարգը Օգտատիրոջը տեղափոխում է բանկի կայք, որտեղ բացվում է վճարում կատարելու պատուհանը,
- բացված պատուհանում կատարում է վճարումը՝ վճարելով ընտրված Տոմսերի արժեքն ամբողջությամբ:

1.6. Պայմանագրի 1.5. կետում ամրագրված բոլոր գործողությունների ճիշտ հաջորդական կատարման և վճարումն ամբողջությամբ բարեհաջող կատարելու պահից Օֆերտան համարվում է ակցեպտավորված. Վաճառողի և Գնորդի միջև Պայմանագիրը համարվում է կնքված:

1.7. Գնորդի կողմից վճարում կատարելու պահից ակցեպտն այլևս չի կարող հետ կանչվել:

1.8. Վճարումը կատարելուց հետո Տոմսերն ուղարկվում են Օգտատիրոջ կողմից նշված էլեկտրոնային հասցեին:

1.9. Վաճառողն ու Գնորդը այսուհետ միասին անվանակոչվելու դեպքում կանվանակոչվեն Կողմեր, առանձին՝ Կողմ:

2. Պայմանագրի առարկան

2.1. Համաձայն Պայմանագրի Վաճառողը վաճառում է Միջոցառումների էլեկտրոնային տոմսեր (այսուհետ՝ Տոմս) Կայքի միջոցով:

2.2. Գնորդը ընտրում է Միջոցառումը, վճարում է ընտրված Տոմսերի արժեքը, որից հետո Տոմսերի էլեկտրոնային տարբերակն ուղարկվում է Գնորդին:

2.3. Գնում կատարելու դեպքում Վաճառողը պարտավորվում է Գնորդին տրամադրել համապատասխան էլեկտրոնային փաստաթուղթ Կայքի և/կամ էլեկտրոնային փոստի միջոցով:

2.4. Միջոցառման անվանումը, նկարագրությունը, ամսաթիվը, ժամը և վայրը ամրագրվում է Տոմսի մեջ:

2.5. Տոմսերի արժեքը նշված է Կայքի համապատասխան էջում:

3. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

3.1. Գնորդը պարտավոր է.

3.1.1. կատարել սույն Պայմանագրով ստանձնած իր պարտավորությունները պատշաճ,

3.1.2. տրամադրել հավաստի տեղեկություններ,

3.1.3. ինքնուրույն ստուգել Միջոցառման տվյալները մինչև գնում կատարելը, ծանոթանալ Միջոցառման մասին տեղեկատվությանը (բովանդակություն, վայր, ժամ, պայմաններ և այլն),

3.1.4. ինքնուրույն ծանոթանալ վճարման եղանակների հետ կապված պայմաններին և կանոններին,

3.1.5. վճարել Տոմսի արժեքը,

3.1.6. փոխհատուցել Վաճառողին պատճառված վնասները:

3.2. Վաճառողը պարտավորվում է.

3.2.1. անվերապահորեն կատարել 18.05.2015թ. «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՕ-49-Ն ՀՀ օրենքի պահանջները,

3.2.2. վճարումն ամբողջությամբ կատարված լինելու դեպքում Գնորդին տրամադրել ընտրված համապատասխան քանակի Տոմս,

3.2.3. տրամադրել Միջոցառումների վերաբերյալ հավաստի տեղեկություններ,

3.2.4. վերադարձնել Տոմսի արժեքը Պայմանագրով սահմանված դեպքերում և կարգով:

3.3. Վաճառողն իրավունք ունի.

3.3.1. սեփական հայեցողությամբ ցանկացած պահի փոխել և/կամ հեռացնել Կայքում տեղադրված ցանկացած տեղեկատվություն,

3.3.2. օգտագործել Գնորդի անձնական տվյալները Պայմանագրով սահմանված կարգով և նպատակներով,

3.3.3. Գնորդին ուղարկել տեղեկություններ Վաճառողի Գաղտնիության քաղաքականությամբ սահմանված կարգով և պայմաններով,

3.3.4. Անհրաժեշտության դեպքում Կապ հաստատել Գնորդի հետ,

3.3.5. դադարեցնել Կայքի աշխատանքը, իրականացնել Կայքում պրոֆիլակտիկ աշխատանքներ, կատարել մոդիֆիկացիաներ,

4. Անձնական տվյալներ

4.1. Գնորդը Վաճառողին տալիս է իր համաձայնությունը ներքոնշյալ անձնական տվյալների մշակման համար, այդ թվում՝ ավտոմատացված, տեխնիկական ցանկացած միջոցներ կիրառելու կամ առանց դրանց.

4.1.1. Անուն, ազգանուն, հայրանուն,

4.1.2. Հեռախոսային համարներ,

4.1.3. Էլեկտրոնային փոստի հասցե:

4.2. Անձնական տվյալները մշակվում են Վաճառողի կողմից Պայմանագրի պայմանների կատարման, ինչպես նաև գովազդային արշավների և մարքեթինգային հետազոտությունների անցկացման նպատակներով: Անձնական տվյալների մշակումը դադարեցնելու պայման կարող է լինել անձնական տվյալների մշակման նպատակներին հասնելը, Գնորդի կողմից անձնական տվյալների մշակման համաձայնության ժամկետի ավարտը կամ համաձայնությունից հրաժարվելը, ինչպես նաև անձնական տվյալների ապօրինի մշակման դեպք ի հայտ գալը:

4.3. Անձնական տվյալների մշակման ընթացքում իրականացվում են հետևյալ գործողությունները՝ հավաքագրում, գրանցում, համակարգում, կուտակում, պահպանում, պարզաբանում (թարմացում, փոփոխություն), հանում, օգտագործում, փոխանցում (տարածում, տրամադրում, հասանելիություն), արգելափակում, ուղեփակում, ոչնչացում:

4.4. Անձնական տվյալների փոխանցումը երրորդ անձանց իրականացվում է 18.05.2015թ. «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՕ-49-Ն ՀՀ օրենքով սահմանված կարգով:

4.5. Վաճառողի կողմից անձնական տվյալները կարող են մշակվել առանց Օգտատիրոջ համաձայնության բացառապես Օրենքով սահմանված դեպքերում:

4.6. Անձնական տվյալների մշակման, օգտագործման, պաշտպանության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վաճառողի Գաղտնիության քաղաքականությամբ, որը տեղադրված է https://dopingspace.com/privacy-policy-arm.pdf հղմամբ:

5. Տոմսի հանձնում

5.1. Տոմսի արժեքը վճարելուց հետո համակարգը ինքնաշխատ եղանակով Գնորդին տրամադրվում է Տոմսը համապատասխան էլեկտրոնային փաստաթղթի տեսքով Կայքի և/կամ էլեկտրոնային փոստի միջոցով: Այդ պահից սկսած Տոմսը համարվում է հանձնված Գնորդին:

5.2. Եթե Գնորդը չի ստացել որևէ եղանակով Տոմս, ապա պետք է վճարումը կատարելուց հետո 40 րոպեի ընթացքում կապ հաստատի Վաճառողի հետ և հայտնի այդ մասին:

5.3. Գնորդի կողմից Պայմանագրի 5.2. կետում սահմանված պահանջը չկատարելու դեպքում Գնորդը զրկվում է Վաճառողին հետագայում որևէ պահանջ ներկայացնելու իրավունքից:

6. Տոմսի վերադարձ

6.1. Տոմսի արժեքի փոխհատուցումն իրականացվում է Վաճառողի կողմից հետևյալ կարգով.

- եթե Վաճառողն անհարգելի պատճառով չեղարկել կամ հետաձգել է Միջոցառումը, ապա կատարվում է Տոմսի արժեքի ամբողջական փոխհատուցում կամ միջոցառումը այլ ամսաթիվ տեղափոխելու առաջարկ,
- եթե Վաճառողը հետաձգել է Միջոցառումն անհաղթահարելի ուժի ազդեցության պատճառով, ապա Տոմսի արժեքը չի վերադարձվում, և Գնորդը կարող է օգտագործել Տոմսը և ներկա գտնվել հետաձգված Միջոցառմանը:

6.2. Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը,

ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը:

7. Եզրափակիչ դրույթներ

7.1. Վաճառողն իրավունք ունի լուծել Պայմանագիրը ցանկացած պահի՝ այդ մասին համապատասխան ծանուցում տեղադրելով Կայքում: Պայմանագիրը համարվում է լուծված ծանուցումը Կայքում տեղադրելու պահից:

7.2. Պայմանագիրը լուծելու և դադարելու հիմքերը որոշվում են ՀՀ գործող օրենսդրությամբ և սույն Պայմանագրով:

7.3. Պայմանագրի դրույթները մեկնաբանելիս Կողմերը, ինչպես նաև դատարանը պետք է ելնեն դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից: Այդպիսիք պարզ չլինելու դեպքում այն սահմանվում է Պայմանագրի մյուս պայմանների և Պայմանագրի ամբողջական իմաստի հետ համադրելու միջոցով:

7.4. Բոլոր այն հարցերը, որոնք կարգավորված չեն Պայմանագրով, կարգավորվում են ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով, ՀՀ գործող օրենսդրության այլ իրավական ակտերով, Վաճառողի Գաղտնիության քաղաքականությամբ և Կայքի օգտագործման կանոններով:

7.5. Պայմանագրի առանձին դրույթի կամ մասի անվավերությունը չի հանգեցնում դրա մյուս դրույթների կամ մասերի անվավերությանը:

7.6. Կողմերի միջև բոլոր վեճերն ու տարաձայնությունները, որոնք չեն լուծվում Կողմերի բանակցությունների արդյունքում, լուծվում են դատական կարգով՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության:

7.7. Ցանկացած դեպքում Վաճառողը պատասխանատվություն չի կրում այլ անձանց կողմից Գնորդի տվյալներով կատարված գործողությունների համար: Այդ գործողություններով Վաճառողին կամ երրորդ անձանց պատճառված վնասի համար պատասխանատվություն է կրում Գնորդը:

7.8. Պայմանագիրը կնքված է հայերեն:

7.9. Կողմերը համաձայնվում են, որ Վաճառողը կարող է միակողմանի փոփոխություններ կատարել Պայմանագրում՝ փոփոխված Պայմանագրի տեքստը տեղադրելով հետևյալ հասցեում https://dopingspace.com/public-offer-arm.pdf: Կայքի օգտագործումը Օգտատիրոջ կողմից հանդիսանում է համաձայնություն փոփոխություններին: Եթե Օգտատերը համաձայն չէ կատարված փոփոխությունների հետ, ապա նա պետք է դադարեցնի Կայքի օգտագործումը:

7.10. Կայքի օգտագործման կանոնները հանդիսանում են սույն Պայմանագրի անբաժանելի մասը և հասանելի են https://dopingspace.com/rules-of-website-use-arm.pdf հղմամբ:

8. Վաճառողի վավերապայմանները՝

«Դոպինգ Սփեյս» ՍՊԸ
ՀՎՀՀ՝ **02893152**
Հասցե՝ ք.Երևան, Նալբանդյան **25** ա բն **58**
Տնօրեն՝ Հայկ Սիմոնյան